

VII ԳՍՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ «ԱՇԽԱՐՀԱՅՈՅԳԻ» ՄԱՍԻՆ

Պրոֆ. Գ. Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայագիտության մեջ լայնորեն հայտնի է VII դարի հայկական «Աշխարհացոյցը», որը մեզ է հասել երկու խմբագրությամբ՝ համառոտ¹ և ընդարձակ²:

«Աշխարհացոյցի» մեզ հասած խմբագրությունները, առաջանալով նախնական մայր տեքստից, դարերի ընթացքում գրիչների կողմից արտագրվել են ու անցել սերնդից սերունդ: Անշուշտ, այդ ձեռագրերում ժամանակի ընթացքում տեղի են ունեցել ընդմիջարկումներ, տեքստը խմբագրվել ու համասույատախառնեցվել է տվյալ ժամանակաշրջանի պահանջներին: Վերջին տասնամյակում Հայաստանում տպագրվել են մի շարք աշխատություններ, որտեղ փորձ է արվում միանգամայն նոր տեսանկյունից լուսաբանել «Աշխարհացոյցի» հետ կապված որոշ հարցեր:

«Աշխարհացոյցի» մասին հրապարակած իր հոդվածում Մ. Մ. Խաչատրյանը գրել է. «Աշխարհացոյցը» իր ժամանակի քարտեզագրական ու աշխարհագրական գիտելիքների կոմպլեքս է, որի քարտեզը ժամանակի ընթացքում, ինչպես նկատել է ակադեմիկոս Ս. Երևմյանը, անհայտացել է, ճիշտ այնպես, ինչպես ոչնչացել են ու չեն հասել մինչև մեր օրերը աշխարհագրության հիմնադիր էրատոսթենեսի ու Պտղոմեոսի քարտեզները և Ռուսաստանի XVII դարի Մեծ Գծագիրը: Սակայն մնացել է Աշխարհացոյցի տեքստային նկարագրությունը, որը կազմված է եղել այդ քարտեզի հիման վրա, նրա բովանդակությամբ, աշխարհագրական ուսումնասիրությունների և գուցե ուսուցման նպատակներով»³:

Մենք այս հոդվածում կանգ կառնենք միայն «Աշխարհացոյցի» քարտեզագրական բնույթի վերաբերյալ Մ. Խաչատրյանի հայտնած տեսակետի քննարկման վրա. «Աշխարհացոյցի» հեղինակի հարցին և երկարության չափերին մենք արդեն անդրադարձել ենք⁴:

«Աշխարհացոյցը» բարեբախտաբար պահպանել է տվյալներ, որոնցից երևում է, թե հայ հեղինակը իր աշխատությունը գրելիս ինչ աղբյուրներ է օգտագործել: Այստեղ մեջ ենք բերում համապատասխան հատվածը «Աշխարհացոյցի»՝ Բ. Պատկանյանի հրատարակած տեքստից. «Եւ առաւել յարտաքս կոյս քան զայս չէ ուրուք զեզր երկրի տեսեալ և կամ գիտաճեալ, որպէս ասէ

¹ К. П. Патканов, Армянская география VII века, СПб., 1877.

² A. Soukry, Géographie de Moïse de Corene d'après Ptolémée, texte arménien traduit en français par le P. Arsen Soukry, Venise, 1881.

³ Մ. Մ. Խաչատրյան, VII դարի «Աշխարհացոյցի» մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 4, էջ 81:

⁴ Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1972, № 10: «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3:

Պտղոմէոս. այլ անծանօթ կոչի երկիր և Ուկիանոս: Յորոյ ինքնագիր բոլորակին տիեզերագրութեանցն առեալ Պապայ Աղեքսանդրացոյ համառօտաբար երկրագրութեամբ, յորմէ մեր ծայրաքաղ արարեալ գրեցար զմեծամեծան և զնշանաւորսն միայն»⁵:

Այս մեջբերումը որոշակիորեն ցույց է տալիս, որ Պապայոս Ալեքսանդրացին իր աշխատութիւնը կազմել է Պտղոմէոսի աշխատութեան հիման վրա, նրաւից վերցնելով ու համառօտելով այն, ինչ գտել է անհրաժեշտ: Պապայոս Ալեքսանդրացու աշխատութիւնը մեզ չի հասել: Այդ փաստը արտացոլվել է աշխարհագրութեան պատմութեան մեջ: «Բայց եղև են Պտղոմէոսյան «Աստղագիտութեան սիստեմի» լուրջ մեկնաբաններ, կարելի է, օրինակ, նշել Պապայոսին և Թեոնոսին (երկուսն էլ Ալեքսանդրիայից), որոնք գրել են շուրջ 320 և 380 թթ. և նույնիսկ զգալիորեն ավելի ուշ շրջանում ապրած հետազոտողների անունները: Պապայոսը կազմել է նաև երկրի նկարագրութիւնը, որը, ամենայն հավանականութեամբ, հիմնված է Պտղոմէոսի տեքստի կամ քարտեզների վրա, բայց հայտնի է սոսկ մի հայ սյատմաբանի աշխատութեամբ, որն օգտվել է Պապայոսի աշխատութիւնից»⁶: Այստեղ նշվում է հայ պատմաբանի մասին, որովհետև երկար ժամանակ հայկական «Աշխարհացոյցը» սխալ կերպով համարվում էր Մովսէս խորենացու աշխատութիւնը:

Այդ մեջբերումներից միաժամանակ որոշակի երևում է, որ Պապայոս Ալեքսանդրացին Պտղոմէոսի տեքստի կամ քարտեզի հիման վրա համառօտաբար կազմել է երկրի նկարագրութիւնը: «Աշխարհացոյցի» հեղինակը որպէս սկզբնաղբյուր ունեցել է Պապայոսի աշխատութիւնը և իր հերթին համառօտելով այն, կազմել է երկրի նկարագրութիւնը, այսինքն «Աշխարհացոյցը»: Ինչպէս պարզ երևում է, հայ հեղինակը ոչ մի խոսք չի ասում քարտեզ կազմելու մասին:

«Աշխարհացոյցի» մեջ մի այլ տեղ նրա հեղինակը գրում է. «Եւ արդ որովհետև երկրագրութեանց զհասարակախօսութիւն, այսուհետև սկսցուք պատմել աշխարհ աշխարհ: առանձին ըստ գրիցն տեղագրութեանց Պապայ աղեքսանդրացոյ, սկիզբն արարեալ յարեմտեայ յովկիանոսէ ՚ի ծայրէն Սպանիոյ աշխարհին...»

Բովանդակի ի նմա երիս աշխարհս փոքունս, որք և ունին դաւառս բացումս և քաղաքս, զորս անուամբ յայտնել աշխատութիւն անշահ համարեցաք: Եւ ոչ միայն զգաւառս և զքաղաքս, այլ և յորհեցաք միայն գրել զլերինս անուանիս և զգետս հզօրս և զքաղաքս հոյակապս, և եթե այլ ինչ նշանաւորիցէ, թողլով ի բաց զթիւս և զլափս զմանրամասնաբար պատմութիւնս»⁷:

Այս մեջբերումը նույնպէս որոշակի ցույց է տալիս, որ «Աշխարհացոյցի» հեղինակը համառօտաբար տալիս է երկրների նկարագրութիւնը, աղբյուր ունենալով Պապայոսի աշխատութիւնը: Այստեղ նույնպէս ոչ մի խոսք չկա քարտեզ կազմելու մասին:

«Աշխարհացոյցի» հեղինակը Հայաստանը նկարագրելիս գրում է. «Արդ կամիմ զղոսա մանրամասնաբար պատմել թէ և սկսաւ ինչ աշխարհից ՚ի գիր և ՚ի քարտէս»⁸:

⁵ К. П. Патканов, նշվ. աշխ., էջ 3:

⁶ Д. Ж. О. Томсон, История древней географии, М., 1953, էջ 510:

⁷ К. П. Патканов, նշվ. աշխ., էջ 7—8:

⁸ նույն տեղում, էջ 17:

«Աշխարհացոյցի» ուշագիւր ընթերցումը ցույց է տալիս, որ նրա հեղինակը Հայաստանը և հարակից երկրները նկարագրում է շատ մանրամասն և դա բնական է: Այստեղ հայ հեղինակը օգտագործում է Հայաստանի և հարևան երկրների վերաբերյալ եղած նյութերը, մի կողմից գրականությունը, մյուս կողմից այդ երկրների քարտեզները:

Ինչպես պարզ երևում է, հայ հեղինակը որոշակի նշում է քարտեզների առկայությունը, որոնք օգտագործում է իր «Աշխարհացոյցը» շարադրելիս: Եւ նոր քարտեզ չի կազմում, այլ եղած առանձին երկրների քարտեզներից համապատասխան նյութ է քաղում իր աշխատության համար այդ երկրների, հատկապես Հայաստանի մասին: Այս կարևոր հանգամանքը «Աշխարհացոյցը» ուսումնասիրողների ուշագրությունից երբեք չպետք է վրիպի, ինչպես այդ տեղի է ունենում Մկրտիչ Խաչատրյանի հետ:

Հայ հեղինակը, ինչպես տեսանք, գործածում է քարտեզ բառը և շատ լավ է հասկանում դրա իմաստը: Եթե «Աշխարհացոյցի» հեղինակը երկրագնդի քարտեզը կազմած լիներ, գոնե մի անգամ կնշեր այդ մասին: Այդպիսի բան «Աշխարհացոյցի» մեջ չկա: Ընդհակառակը, հայ հեղինակը Հայաստանի և հարակից երկրների մասին շատ հարուստ նյութ է վերցնում գոյություն ունեցող քարտեզներից ու մտցնում իր աշխատության նկարագրական տեքստի մեջ: Այդ քարտեզների առկայությունը ապացուց է այն բանի, որ Արշակունիների ժամանակ քարտեզագրությանը որոշակի տեղ է տրվել: Պատահական չի կարելի համարել այն փաստը, որ «Աշխարհացոյցի» հեղինակը գրի է առել մանրամասն տեղեկություններ Արշակունիների ժամանակաշրջանի Հայաստանի մասին:

Այս ամենը ցույց է տալիս, որ նոր եղրակացություններն ու դրույթները ոչ մի կերպ չեն բխում «Աշխարհացոյցի» տեքստից:

Մ. Մ. Խաչատրյանը գտնում է, որ «Աշխարհացոյցի» հեղինակը կազմել է միայն մեկ ընդհանուր քարտեզ այն ժամանակվա հայտնի երկրի համար: Այս կապակցությամբ նա գրում է. «Աշխարհացոյցի հեղինակը իր քարտեզի մասթեմատիկական տարրերն ու նրան վերաբերող այլ կարևոր մանրամասներ շարադրելուց հետո, նախքան բնաշխարհներ նկարագրելը, նշում է, որ այժմ ձեռնարկելու է նկարագրության՝ «աշխարհ առ աշխարհ առանձին, ըստ Պապպոս Ալեքսանդրացու նկարագրության»: Աշխարհացոյցի հեղինակը այս բացատրությունից երևում է, որ սխալվում են այն ուսումնասիրողները, որոնք կարծում են, թե Աշխարհացոյցը տարբեր երկրների քարտեզների հավաքածու է: Աշխարհացոյցը միայն աշխարհի քարտեզ է ունեցել, իսկ բնաշխարհները տրված են տեքստով: Աշխարհացոյցի հեղինակը քարտեզագրական հասկացողություններ շարադրելիս ունեցել է իր կազմած աշխարհի քարտեզը, մինչդեռ բնաշխարհների (սֆրագիդներ՝ ըստ էրատոսթենեսի) նկարագրության համար օգտագործել է Պապպոս Ալեքսանդրացու խորոգրաֆիա աշխատությունը, որ քարտեզներ չի ունեցել»⁹:

Ինչպես վերը ցույց տրվեց, «Աշխարհացոյցի» հեղինակը ոչ մի քարտեզ չի կազմել:

Մ. Մ. Խաչատրյանն իր հոդվածում մի քանի տեղ փորձում է ընթերցողին համոզել, որ հայ հեղինակը Պտղոմեոսից հետո զարգացրել է քարտեզագրու-

⁹ Մ. Մ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 82—83:

թյունն ու զրել ինքնուրույն աշխատություն: Ահա այդ տողերը. «Քարտեզագրության դասական այն եղանակները, որ մշակել ու կիրառել է երկրորդ դարի ականավոր գիտնական Պտղոմեոսը, պահպանվել ու հետագա զարգացում են ստացել միայն Աշխարհացույցի մեջ»¹⁰:

Մի ուրիշ տեղ Մ. Խաչատրյանը գրում է. «Քարտեզի ինքնուրույնությունը հաստատող ամենակարևոր ապացույցն է, ինչպես ասացինք, քարտեզի պրոյեկցիան, որովհետև նրա վրա ներկայացվելիք աշխարհագրական բոլոր մանրամասների զրաված դիրքն ու համապարփակ տեսքը բնորոշվում են բացառապես այդ պրոյեկցիայի էությունով: Ամբողջ աշխարհի քարտեզագրական պատկերման համար կեղծ կոնային պրոյեկցիան առաջին անգամ օգտագործել է Աշխարհացույցի հեղինակը»¹¹: Այնուհետև. «Դա նշանակում է, որ Աշխարհացույցի քարտեզագրական ցանցը տարբերվում է իրեն ժամանակակից հայտնի ցանցերից ոչ միայն անվամբ, այլև օրվա տեղումնով ու համարակալման հաջորդականությամբ, ինչպես նաև նահանգների քանակով: Աշխարհացույցի հեղինակը անհրաժեշտ մասնամատիկական հաշվումներ է կատարել և նախընտրել է զոնանների նոր ստորաբաժանում: Ինչպես տեսնում ենք, Աշխարհացույցի հեղինակը կիրառել է նորը և խուսափել է հնի ընդօրինակումից»¹²:

Մ. Խաչատրյանը նշում է, որ հայ հեղինակը զարգացրել է II դարի գիտնական Պտղոմեոսի քարտեզագրական դասական եղանակները և ամբողջ աշխարհի քարտեզագրական պատկերման համար առաջին անգամ օգտագործել է կեղծ կոնային պրոյեկցիան, իսկ մյուս կողմից նախընտրել է զոնանների նոր ստորաբաժանում: Մ. Խաչատրյանի նման պնդումները շեն համապատասխանում իրականությանը: Ճշմարտությունը բացահայտելու համար դիմենք աշխարհագրության պատմությանը: «Աշխարհագրության ձեռնարկում» Պտղոմեոսը քարտեզագրության հարցեր է լուծում և նկարագրական նյութ գրեթե չի բերում (Ֆրոլով, էջ 118—119): Առաջին անգամ նա է կիրառել հատուկ քարտեզագրական պրոյեկցիաներ՝ Երկրի սֆերիկ մակերևույթը հարթության մեջ պատկերելու համար: Այդ պրոյեկցիաներից մեկը հավասարամիջանկյալ կոնաձև է, մյուսը՝ կեղծ կոնաձև: 10^o-ով անցկացված միջօրեականները մի դեպքում ուղիղ գծեր էին, որոնք միանում էին քարտեզի սահմաններից դուրս գտնվող կետում, իսկ մյուս դեպքում՝ կորագծեր: Զուգահեռականները պատկերվում էին աղեղնաձև և դժվում էին տարբեր շառավիղներով»¹³:

Մ. Ս. Խաչատրյանը գրում է. «Աշխարհագրության հիմնադիր էրատոսթենեսը երկիրը բաժանել է ութ կլիմագոտիների: Հիպարքոսը երկիրը բաժանել է 14 կլիմայի, Պոսիդոնիոսը՝ 13 կլիմայի: Աշխարհացույցի հեղինակը նպատակահարմար է գտել աշխարհը ներկայացնել միայն 7 նահանգների (կլիմաների) միջոցով: Նրա նախընտրած այդ սխեմանը շի համընկնում ինչպես էրատոսթենեսի, նույնպես Պտղոմեոսի և այլոց քարտեզների աշխարհագրական ցանցի հետ:Աշխարհացույցի հեղինակը անհրաժեշտ մասնամատիկական հաշվարկումներ է կատարել և նախընտրել է զոնանների նոր ստորա-

¹⁰ Նույն տեղում, էջ 81—85:

¹¹ Նույն տեղում, էջ 86:

¹² Նույն տեղում:

¹³ А. Б. Дитмар, Рубежи ойкумены, М., 1973, էջ 122:

քաժանում: Ինչպես տեսնում ենք, Աշխարհացոյցի հեղինակը կիրառել է նորը և խուսափել է հնի ընդօրինակումից»¹⁴:

Աշխարհացոյցի հեղինակը մաթեմատիկական հաշվումներ չի կատարել և ոչ մի քարտեզ չի կազմել: Նա աշխարհը ներկայացրել է 7 նահանգների միջոցով, 7 թիվը վերցված է Պապպոս Ալեքսանդրացու «Աշխարհացոյցի» նկարագրական տեքստից, որն իր հերթին վերցված է Պտղոմեոսի աշխատությունից: Ավելի խորը ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ էրատոսթենեսը և Պտղոմեոսը երկիրը բաժանել են 7 կլիմաների, այդ պատճառով էլ հայ հեղինակի մոտ ունենք 7 թիվը: Ահա թե այդ կապակցությամբ ինչ է գրում Ա. Բ. Դիտմարը. «Այնուհետև ամբողջ «բարեխառն» գոտին էրատոսթենեսը բաժանել է յոթ զուգահեռականներով, որոնք միմյանցից տարբերվում են ամառային ամենաերկար օրվա 1/2 ժամով: Այդ զուգահեռականները նրա քարտեզի հիմքն են կազմել: էրատոսթենեսի քարտեզում զուգահեռականների թվի հարցը վաղուց ի վեր վիճարկվում է սլաոմա-աշխարհագրական գրականության մեջ: Որոշ հեղինակների կարծիքով էրատոսթենեսը օգտվել է 6 զուգահեռականներից, մյուսները էրատոսթենեսի քարտեզի իրենց վերականգնումների մեջ մատնանշում են 8 զուգահեռական, իսկ ոմանք էլ նույնիսկ 10 զուգահեռական են նշում: Վեճի պատճառն այն է, որ Ստրաբոնի «Աշխարհագրություն» տեքստում, ուր քննարկվում են էրատոսթենեսի քարտեզն ու «Աշխարհագրական գրությունները», ինչպես նաև դրանց վերաբերյալ Հիպարքոսի քննադատական դիտողությունները, այնքան էլ պարզ չէ, թե անմիջականորեն ինչն է պատկանում էրատոսթենեսին և ինչը Հիպարքոսին: Մեզ թվում է, որ 7 զուգահեռականների (կամ «կլիմաների») հարցը ճիշտ է լուծել է. Հոնիգմանը (Honigmann, 1929) և նրան պաշտպանել է Ա. Դիլլերը (Diller, 1934, 1941)»¹⁵: Մի այլ հարցի կապակցությամբ Մ. Մ. Խաչատրյանը գրում է. «Բացի այդ, Աշխարհացոյցի հեղինակը երեք անգամ նշել է (Յ. 5, 7 էջերում), որ ինքը միայն ծաղկաքաղ է արել Պապպոս Ալեքսանդրացու կողմից կատարած՝ Պտղոմեոսի աշխատության համառոտագրությունից («Յոյս ինքնագիր թուրքական տիեզերագրութեանցն առեալ Պապպոս Ալեքսանդրացույ համառոտաբար երկրագրութեամբ, յորմէ մեր ծալրաքաղ արարեալ գրեցաք զմեծամեծսն և զնշանավորսն միայն»): Մենք ոչ մի հիմք չունենք Աշխարհացոյցի հեղինակին շահատալու»¹⁶:

«Աշխարհացոյցի» հեղինակն իր աշխատությունը կազմելու համար որպես հիմնական աղբյուր օգտագործել է Պապպոս Ալեքսանդրացու աշխատությունը, Հայաստանի և հարևան երկրների վերաբերյալ գրականությունն ու քարտեզները: Հայ հեղինակը տվել է իր ժամանակի հայտնի աշխարհի նկարագրությունը, որը հանդիսացել է աշխարհագրության ձեռնարկ:

«Աշխարհացոյցի» միջոցով մեզ են հասել շատ կարևոր աշխարհագրական տեղեկություններ և երկարության չափեր, որոնք չեն պահպանվել հունական և այլ ժողովուրդների՝ մեզ հասած աղբյուրներում. այդ տեսակետից «Աշխարհացոյցը» ստանում է միջազգային նշանակություն:

14 Մ. Մ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 86—87:

15 Ա. Բ. Դիլլեր, նշվ. աշխ., էջ 76:

16 Մ. Մ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 88:

«Աշխարհացոյցի» հեղինակի մեծ ծառայութիւնը կայանում է նրանում, որ նա Հայաստանում տարածել է հելլենիստական շրջանի Աղեքսանդրյան դպրոցի կարկառուն ներկայացուցիչ Պտղոմեոսի լուսամիտ գաղափարները աշխարհագրութեան բնագավառում:

ОБ АРМЯНСКОЙ ГЕОГРАФИИ VII ВЕКА «АШХАРАЦУЙЦЕ»

Проф. Г. Б. ПЕТРОСЯН

(Резюме)

В «Ашхарацуйце» (армянской географии VII в.), отражающем традиции Птолемея, описывается известная в то время часть земного шара (17° ю. ш.—63° с. ш. и 1°—180° долготы). Основными его источниками являются не дошедший до нас труд Паппа Александрийского, карты Армении и сопредельных стран, литература. «Ашхарацуйц» содержит в себе богатый материал: ценные географические сведения, в особенности по Армении и соседним странам, и меры длины, которые сохранились только в армянских источниках. Заслуга автора «Ашхарацуйца» заключается в том, что он распространил систему Птолемея в Армении и обогатил ее географию местными материалами.

В статье оспариваются некоторые положения работы М. М. Хачатряна «Об «Ашхарацуйце» VII в.» («Историко-филологический журнал», 1968, № 4).